

ՔՐԻՍՏՈՍԻԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի. Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՆԵՐՎԱՅ 1894 ԹԻՎԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՌՈՒԹՅԱՆ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ 10 ռ., տասն և մէկ և տասն ամսանը՝ 9 ռ., ինն և ութ ամսանը՝ 8 ռ., եօթ ամսանը՝ 7 ռ., վեց ամսանը՝ 6 ռ., հինգ ամսանը՝ 5 ռ., չորս ամսանը՝ 4 ռ., երեք ամսանը՝ 3 ռ., երկու ամսանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊԱԳՐԱՍՏԱՆԸ: Օտարաբարաբացիք պէտք է դիմեն հետեւեալ հասցեով՝ Тифлисъ. Редакция «Мшакъ», իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Հարեան երկիրները. Չն և միայն ձև.—ՆԵՐՎԻՆ ՏՅՈՒՌՈՒՄԻՆ. Սովետների գոտին. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏՅՈՒՌՈՒՄԻՆ. Միջազգային փոփոխութիւններ. Առաքելի լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՒՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կանանց Բարձրագոյն կրթութիւնը Ռուսաստանում.

ՀԱՐՅԻԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ

II

Պօստ, հեռագրատուն, զգարոց, բանկ, խճուղի, երկաթուղի, լրագիր.—ահա այն հիմնարկութիւնները, որոնք պահանջ են դարձել ժամանակակից քաղաքակրթ մարդու համար և առանց զբաղման նա անստիկ զգուշացումներով մէջ կը գտար իրան: Ամերիկացիները այդ հիմնարկութիւններով անցնում, պատուում էին Ամերիկայի անապատներն ու կուսական անտառները: Գրանք տարրական հիմնարկութիւններ են քաղաքակրթ մարդու համար, բայց զեռ Ասիայում, մեր հարեան ասիական երկիրներում նրանք դեռ շատ մեծ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Անցեալ դեկտեմբերին Պետերբուրգում տեղի ունեցած ռուս բժիշկների V-րորդ ընդհանուր ժողովին վիճակված էր վճռական աղիցողութիւն ունենալ մի խնդրի իրագործման վրա, որ տասնակ ասիական շարունակ գրադեցնում էր թէ ռուս հասարակութեան, թէ մամուլին.—դա կանանց բժշկական բարձրագոյն կրթութիւնն է: Բժշկական կուրսերի ծրագիրը արդէն մշակված էր ժողովրդական լուստարութեան միջնորդութեան մէջ և Բարձրագոյն հրամանը թողարկում էր բանալ, հէնց որ կը ժողովի բաւականաչափ գումար: Կուրսերը պէտք է պահվեն մասնաւոր նուիրաբերութիւններով: Ահա ժողովը, իր անզամեբից երկուսի առաջարկութեամբ, յանձն առաւ նուիրաբերութիւնների նախաձեռնութիւնը և այսօր, շնորհի մի երկու խոշոր գրամատերերի, հարկաւոր գումարի մեծ մասը գոյացած է. և պակասը լրանալուց յետոյ անմիջապէս կը բացվեն կանանց բժշկական կուրսերը: Ռուս հասարակութեան վաղեմի ցանկութիւնը մօտ է իր իրագործման, ուստի և մամուլը վերջին ամիսներում առանձնապէս իր ջնստութեան առարկայ է դարձրել այդ խնդիրը: Թէ ամապրերում, թէ

զգուշացութիւններով են մուտք գործում, մինչդեռ այդ հիմնարկութիւնները ընդունակ են մեծ զիւրութիւններ առաջ բերել քաղաքակրթութիւնը տարածելու մեր երկրում:

Այդ հիմնարկութիւնները հետեւեալ են կուրսերական կեանքի և իրանք էլ իրանց կողմից նպաստում են քաղաքակրթութեան զարգացման: Երբ որ մի երկրի մէջ հաստատ հիմք են դրել այդ տեսակի մի քանի հիմնարկութիւններ, այնտեղ էլ հիմք է դրվում կուրսերական կեանքի համար:

Մի այնպիսի հասարակ հիմնարկութիւն, ինչպիսին է օրինակ պօստը, մինչև այժմ կանոնաւոր կազմակերպութիւն չէ ստացել մեր հարեան երկիրներում: օրինակ, թիւրքիայում պօստատանը բացված են միայն մի քանի կենտրոնական քաղաքներում: Մի քանի ժամանակ առաջ՝ նոյն իսկ թիւրքիայի մայրաքաղաքում պօստը գտնվում էր ամենամանկութեամբ վիճակի մէջ և եւրոպական պետութիւնները ստիպվեցան բանալ իրանց սեփական պօստային հիմնարկութիւնները Կ. Պոլսում:

Բայց մի այնպիսի տարրական հիմնարկութեան կանոնաւոր կազմակերպութիւնը արդէն կարողութիւն է ստիպ մարդկանց վերացնել մի շարք անյարմարութիւններ և զեղծումներ, որ տեղի ունեն ներկայումս: Արդարեւ, եթէ պօստը մուտք գործած լինէր թիւրքիայի և Պարսկաստանի ամենախոր անկիւնները և ամենականոնաւոր կազմակերպութիւն ունենար, նոյն իսկ մի այնպիսի խնդիր, որ նորերս գործածեալ գրաւեց մեր լրագրի էջերը, մասամբ կարող կը լինէր արդ լուծուած ստանալ: Մեր խօսքը թիւրքահայ մշակների իրանց հայրենի զիւրերը փող ուղարկելու մասին է: Մշակները կարող կը լինէին պօստի միջոցով ամենաապահով կերպով գրած ուղարկել իրանց զիւրերը, և կազմայեղին միջնորդների կեղծումները:

Եթէ մի երկաթուղի անցկացրած լինէր Վանի և Մուշի կողմերից դէպի Տրապիզոն կամ դէպի մեր ահմալները, որչափ հեշտացած կը լինէր մարդկանց երթևեկութիւնը, մշակները յաճախ կայցեղէին իրանց երկիրները, կամ գուցէ շահաւէտ կը

ամենօրեայ թերթերում դուրս եկան մեծ ու փոքր յօդուածներ, որոնք բազմակողմանի ժշակութեան են ենթարկում այդ խնդիրը Արժանի է առանձին ուղարկութեան «Рус. Восток» ամսագիրը ասիական համարի ներքին տեսութիւնը, ուր ամբողջ ու խելացի կերպով խօսում է ոչ միայն կանանց բժշկական կրթութեան մասին, այլ և նրանց բարձրագոյն կրթութեան մասին ընդհանրապէս: Կայնապէս առաջ բերել այստեղ այդ յօդուածի զլուստը կէտերը:

Այն փաստը, որ մինչև այժմ կանանց եղած բարձրագոյն կուրսերը Ռուսաստանում հիմնված են եղել մասնաւոր նուիրաբերութիւնների վրա և մօտիկ ապագայում բացվող բժշկական կուրսերն են այդ միջոցով պէտք է պահպանեն իրանց գոյութիւնը, արդէն բաւականաչափ ապացոյց է թէ որքան համակարգելու ու սիրով է վերաբերվում ռուս ժողովուրդը կանանց բարձրագոյն կրթութեան: Յիրակի, մի հասարակութիւն, որ դատապարտելի անտարբերութեամբ է վերաբերվում դէպի իր կեանքի մէջ երեսցող խնդիրները, կանանց կրթութեան գործում ցոյց է տալիս տարբերակ եւանդ ու համակարգը. նա ոչ միայն չէ դադարում տարիների ընթացքում անզաղար պահանջել, որ իրագործվի այդ ցանկութիւնը, այլ և տալիս է իր ներկայիս օգնութիւնը դրա պահպանման համար:

Ինչով բացատրել այդ երեւոյթը, եթէ ոչ նրա՝ նույն օր հասարակութիւնը զգացել է, թէ ինչ բարեբար հետեւներն է առաջ բերում կանանց

զանկէն նոյն իսկ իրանց երկիրներում մնալ, այնտեղ աշխատել, որովհետեւ այն ժամանակ արդիւնագործական կեանք կը սկսէր երկրի խորքում և երկրի բերքերը կանոնաւոր կաճառահանութեան առարկաներ դարձած կը լինէին: Բացի դրանից հէնց այս սովի ժամանակ, այս ձեռքը անկարելի եղաւ Տրապիզոնից ցորեն ներմուծել էրբրումի և Վանի նահանգները, որովհետեւ ճանապարհներ չը կան, և եղած ողորմելի անցքերն էլ ձեռքը փակված էին:

Այդ առաջին հիմնարկութիւնները կը դրէին նոր հիմնարկութիւններ աւելացնելու, մուտք կը գործէին նոր մշակութիւններ, գործարանական կեանք և այլն: Այն ժամանակ իրանք-իրանք կը վերանային շատերը այն անկարողութիւններից, որոնք այժմ խոչնդոտ են հանդիսանում երկրի և ազգայնակութեան բարգաւաճման համար:

Եւ այն ժամանակ կիրագործվէին շատ կուրսերական բարենորոգումներ որոնք այժմ միայն իբրև նախագծեր զարգարում են թղթերի էջերը: Ինքը թիւրքաց կառավարութիւնը յաճախ կրկնել է, որ ցանկանում է զարգացնել իր երկրի արդիւնագործութիւնը, մոնցնել ապահովութիւն, տարածել արհեստներ, պատուաստել նոր մշակութիւններ: Բայց այդ բոլորը իրագործելու համար պէտք է ձեռք առնել մի քանի հիմնական գործողութիւններ, որոնք տեղի ունեն բոլոր քաղաքակրթ երկիրներում: Եւ երբ մի երկրի մէջ հաստատ արմատներ է բռնում քաղաքակրթական զարգացումը, ծծովում, մարմնանում է ազգայնակութեան կենտրոնը այն ժամանակ նա դիմանում է զանազան պատահարների հարուածներին անգամ: Ֆրանսիան շատ անգամ փոխեց իր կառավարութեան ձևը, բայց նրա ներքին կեանքը, մարդկանց յարեբերութիւնները, արհեստագործութիւնը շարունակում էին իրանց ընթացքով առաջ գնալ:

Քաղաքակրթական կեանքը, անզաղար առաջադիմելով, բարձրացնում է մարդկանց պահանջները, քանակը և որակութիւնը և այլ ևս անկարող է յայտնի աստիճանից իջնել, յետ գնալ և ոչնչացնել կարգ ու կանոնները: Քաղաքակրթական

բարձրագոյն կրթութիւնը իր կեանքի մէջ. նա արդէն ակնատես է եղել կանանց գործունէութեան թէ գաւառներում և թէ կենտրոններում: Նոյն հասարակութեան յայտնի է, թէ ինչպիսի անընկճելի ձգտումներ են ցոյց տալիս ռուսաստանի կանայք դէպի բարձրագոյն կրթութիւնը, չը նայած այդ ձախուղ պայմաններին, որոնք խոչնդոտ են հանդիսանում նրանց ամեն մի քայլում: Այո, տասնակ տարիներ են, որ եւրոպական համալսարանների ուսանողուհիների թում անպակաս է եղել և ռուսաստանցիների մի որոշ տոկոս: 70-ական թվականներին, երբ Ռուսաստանում գոյութիւն ունէին կանանց բարձրագոյն կուրսերը, արտասահմանում ուսանող ռուս կանայք թիւը նուազում էր հետզհետէ. բայց երբ քաղաքներն այդ կուրսերը, հասանք նորից ստատկացաւ և ներկայումս օրից օր աւելանում է, այնպէս որ ռուսաստանցի կանայք Շվեյցարիայի Ֆրանսիայի համար ուսանողուհիների որոշ կենտրոններ են կազմում:

Այժմ քննարկարար հարց է ծագում—մի խնդիր, որ ռուս հասարակական կեանքի մէջ ստացին է իր raison d'être-ը, մի խնդիր, որ իր վերջին, գրական վիճակը ստացել է այդ կեանքի փորձից, ինչի է մեծ անխորհրդելի Ռուսաստանի հողի վրա, ինչն է արդիւնում միջոց տալ կանանց, որ իրանց երիտասարդ տարիները օտար երկրակամարի տակ անցնելու փոխարէն, հայրենի հողի վրա ստանան բարձրագոյն կրթութիւնը:

կեանքի այդ հիմնական կուրսերական հիւսւածքը այնպիսով դառնում է ինքն ըստ ինքեան մի ապահովութիւն, մի գարանատիա, հակակուլտուրական փորձերի և հոսանքների դէմ:

ՉՆԻ ԵՒ ՄԻՍՅՆ ՉՆԻ

Մայրաքաղաքի ռուս լրագիրները շօշափում են մի շատ կարեւոր հարց, որը որքան ռուս, նոյնքան և մեր տեղական հայ ու վրացի ժողովուրդներին է վերաբերում:—Կա ամենքին ծանօթ այն տխուր երեւոյթն է, որ մեր ժողովուրդը քրիստոնէական եկեղեցու ամենամեծ անները դարձրել է զուարճութեան և քեջի միջոցներ, և կրօնական պարտաւորութիւնները կատարում է լոկ ձեական կողմից առանց ըմբռնելու էութիւնը, մի ախտ, որ քանի դուրս աւելի է տարածվում, աւելի է վարակում ժողովուրդին:

Եւ ճշմարիտ, նայեցէք ձեր շուրջը. ամեն բան վերածվել է ձեականութեան: Ոչ միայն կեանքի սովորական, առօրեայ խնդիրները զբաղեցնում են մեզ շատ անգամ ձեականութեան կողմից, այլ և ամենալուրջ, ամենաէական խնդիրները, որոնք պահանջում են լուրջ, զիտակցական վերաբերութիւն, լոկ ձեականութեան պահանջներ են դարձել: Նոյն իսկ կրօնական, բարեգործական, մարդասիրական զգացումները շատ անգամ ձեական կերպով են արտայայտվում և ընթացք գտնում էութիւնը ըմբռնելու փոխարէն, ժողովուրդը ըմբռնում է միայն ձեռք, որովհետեւ նրան ցոյց են տալիս միայն ձեռք և ոչ էութիւն: Եւ եւտարանի, քրիստոնէութեան բուն միտքը էութիւնը ըմբռնելու և պաշտելու տեղ, նա պաշտում է միայն նիւթական պատկերը, տեղը, թուղթը, կապը և կեղեք, որովհետեւ նրան միայն այդ են մատուցանում եկեղեցում, քանի որ ամբողջ ժամանացութիւնը կատարվում է և աւետարանը կարգացվում է ժողովուրդին անհասկանալի լեզուով: Փոխանակ իբրև ճշմարիտ, հաստատացող քրիստոնէայ իր սիրտը շինելու կենդանի տաճար, նա կառուցանում է քարեղէն տաճարներ. փոխանակ իր սրբ-

Սրանից դեռ մի քանի տասնեակ տարիներ առաջ գուցէ կարելի լինէր թոյլ տալ այդ բանը, որովհետեւ նոր էր հրապարակ գալիս կանանց բարձրագոյն կրթութեան խնդիրը: Կային մարդիկ, որոնք անընդունակ էին համարում կանանց բարձր մտաւոր աշխատանքի, պատճառ բերելով նրանց ֆիզիոլոգիական կազմաւածքը, ուղեղի փոքրութիւնը, բնտանկան գրգռելիքը, և այլն, պատճառներ, որոնք նոյնքան հաստատ են լուրջ իրիտիկայի առաջ, որքան աւազի վրա կանգնած տանը՝ հեղեղի դիմաց: Եւ շատ փոխվեցան այդ տարիների ընթացքում, շատ թեր ու դէմ կարծիքներ հրապարակ եկան և գալիս են, կազմվեցին կուսակցութիւններ, որոնք մինչև այսօր էլ դեռ չեն յանգել իրանց վերջնական վճռին, բայց այդ բոլորի իրական հետեւներն եղաւ այն, որ այսօր արտասահմանի համալսարանները մէկը միւսի յետեւից բաց են անում իրանց դռները կին սերնդի առաջ: Կինը վստահ քայլերով անցնում է այդ շեմքով և նոյն վստահութիւնը պահպանում է կրթարանից դուրս՝ կեանքի գործունէութեան մէջ: Հակառակորդ գործութեամբ կարծես ռուս կնոջն էր վիճակված անել առաջին քայլը այդ գործում—60-ական թվականների սկզբում օր. Սուրովա, Ռուսաստանից անցնելով Յիւրիին, խնդիր է տալիս տեղական համալսարանի սենատին, որ իրան ընդունեն ուսանողների շարքը. սենատը ոչինչ չը գտնելով համալսարանի կանոնադրութեան մէջ այդ խնդիրը դէմ, թողարկում է ռուս օրիորդին մտնել համալսարան: Անցնում է 5 տա-

միաձեռնադիր և միաստորագիր ստացադրերն Վրան կը կատարանան, մեր երկրում դեռ հին նահապետական սովորութիւն է. այս հինգ տարւան մէջ ոչ թէ 16 հատ միաձեռնադիր և միաստորագիր ստացադրեր տուած եմ իմ երկրացի ժախներին, այլ երկու հազարից աւելի մի և նոյն ստացադրեր բաժանած եմ մշակներին. կարճ կատարեմ, պ. Փափազեան, իմ մասին եթէ գիտէք կայ մարդ մը, որի տուած փողերն չէ հասեր ամբողջովին, իր ժամանակին, կամ ապրանք, կամ մաս մաս տրված է իմ եղբայրս միջոցաւ, կամ կեղծ ստացադրերով ապահովուցուած եմ մշակներին, այն ժամանակ ես կախազանի արժանի եմ: Ինձ փող տուող մշակներ բոլորն ալ այս տեղն են, թիֆլիս, Փոթի և Բաթում, թող նրանք ասեն, թէ արդեօք իմ ասածները ճշմարիտ են, թէ ոչ:

Հաճի Սիմոն Տէր-Պողոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կազմուած, մայիսի 28-ին

Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը ապրիլ ամսի ընթացքում ստացել է հետևեալ գումարները ի նպաստ ընդ և զարթեցնող կարօտեալներին: Բարեգործական ընկերութեան խորհրդից—500 ռ., խորհրդի կարգադրութեամբ Կարսի ճիւղի վարչութիւնից—200 ռ., «Մշակ» լրագրի խմբագրութիւնից—200 ռ., «Արձագանք» լրագրի խմբագրութիւնից—30 ռ.: Մի ներկայացուցից, որ առև սիրողները տուին յօգուտ սովեակներին—90 ռ.: Ընդամենը մինչև օրս ստացված է—1,020 ռուբլի:

Այս գումարը ծախսված է այսպէս. վճարած է 233 պող դարբին—394 ռ. 95 կ., 166 պող ցորենի և 187 պող դարբին—500 ռ., բաժանված է փող—154 ռ. վճարված է հացի—8 ռ.: Ընդամենը ծախս—1,056 ռ. 95 կոպէկ:

Յօրենք, գործին և ախրը գին և բաժանել է անձամբ վարչութեան նախագահը Կազմուած և Նախիջան, Չաչի, Մրնի, Տիկու, Ազարակ, Մալբակ, Չալայ, Բիրս և Ղարաբաղ գիւղերում, անձամբ տեղեկանալով կարօտեալների վիճակին: Բաւականաչափ ցորեն չը գտնելու պատճառով մի քանի ընտանիքներին յիշեալ գիւղերում գրամական օգնութիւն է տուած, իսկ Թուշ-Քիլիսս, Չուրուկ և Շատրվան գիւղերում բացառապէս փող է բաժանված:

Վարչութիւնը խնդրում է սպազդել այս համառօտ հաշիւը ի գիտութիւն նուիրատուներին:

Նախագահ վարչութեան՝ Գ. Կաճկաճեանց
Գործավար՝ Հ. Տ. Սաչատրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Սովեակների օգտին եղող նուիրատուութիւնները, վերջին երկու—երեք շաբաթվայ ընթացքում, ինչպէս երևում է ընդհանուր տեղեկութիւններից, նուսազում են: Թէ մեր հասարակութիւնը կարծում է, թէ վտանգը արդէն անցել է, և ժամանակ է վերջ տալու նուիրատուութիւններին, —նաչարաչար սխալվում է: Վտանգը մասամբ անցած կարելի է համարել մեր գաւառներում միայն, իսկ թիւրքահայ գաղթականների և թիւրքաց Հայաստանի սովեակների համար, —ոչ: Կարծւոյս էլ լի է հարկուտոր գաղթականներով: Նրանց կերակրելու և ժամանակին էլ իրանց հայրենիքը վերադարձնելու համար բաւական փող է հարկուտոր մեծ փողեր են հարկուտոր և այն թիւրքահայ սովեակների համար, որոնք նստած իրանց ընդ հայրենիքում, սարսափով համրում են իրանց դառն րօպիները և օգնութիւն աղերսում: Նուիրատուութիւնները նուսազեցնելու փոխարէն՝ ընդհակառակը պէտք է առատաձեռնութեամբ շարունակել էլ ի մի երկու ամիս, մինչև որ սովի վտանգն անցնի, մինչև որ մարդիկ ազատվեն սովամահ լինելու ծանր վիճակից: Մի թէ այդ մարդասիրական, եղբայրական պարտքը կատարելու համար հայոց հասարակութիւնը նոր յորդորներ կարիք ունի...

Կ. Պոստից մեզ գրում են, որ վերջին օրերս խորէն եպիսկոպոս Աշքեան մի քանի անգամ տեսնելից մեծ—եպիսկոպոսի հետ: Այդ տեսակցութեան նպատակն է մի ելք գտնել այժմեան անկանելի դրութեան համար: Պատրիարքի և թիւրք կառավարութեան յարաբերութիւնները շատ բարեկամական են:

Երկու յունիսի 6-ին, Կարսից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Նահապետ վարդապետ Նահապետեանը հեռագիր ստացաւ Էջմիածնից, որով պատրվում է նրան գործերը յանձնել Թաւաքական վարդապետին և ճանապարհ ընկնել Էջմիածին»:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսի Քամոյեանց եկեղեցու երէցփոյս պ. Բ. Մէլիք Ղարաբեգեանց անցեալ մայիսի 29-ին առանձին հրատարակութեամբ նրախիւղ է եկեղեցու ծխականներին՝ ծխական ընդհանուր ժողով կազմելու: Պ. երէցփոյսը պատրաստել է մի ընդարձակ զեկուցում և հաշիւը գործողութիւններ վերաբերմամբ և մտադիր է եղել առաջարկել ժողովի ընտրութեան մի շարք հետաքրքիր և կարևոր խնդիրներ, որոնց լուծելը անհրաժեշտ է, որպէս զի եկեղեցին չը զրկվի իր շահերից և երէցփոյսի գործունէութիւնը կանգ չառնի: Գծադրաբար, ժողովը չէ կարողացել կայանալ, ծխականների թիւ սակաւութեան պատճառով: Քամոյեանց եկեղեցու երէցփոյսի արած քայլը արժանի է ամենայն համակրութեան և զուցէ այդ առաջին փորձն է մեր երէցփոյսների կողմից՝ հրատարակելու ծխական ժողովուրդը աւելի ներգործական դեր խաղալու իր եկեղեցու գործերի կառավարութեան մէջ. բայց որքան զեղեցիկ է այդ փորձը, նոյնչափ և պակասակալի է ծխականների վարմունքը, որոնք լրջօրէն չեն վերաբերվում իրանց պարտաւորութիւններին և իրաւունքներին և իրանց անտարբերութեամբ կարող են գործողի ետանդը թուլացնել: Յոյս ունենք, որ այդ տեսակ անփոյթութիւն և անտարբերութիւն այդ ծխականների կողմից վերջինը կը լինի և ալ նա չի կրկնվի:

Ամերիկայից մեզ մի մասնաւոր նամակով գրում են. «Վլաստիկ հայ գաղթականները բաժանված են մի քանի խմբերի, և նոյն իսկ թէլը նամական բանակներին: Այդ տեսակ պառակտման համար ոչ պատճառ կայ, և ոչ գաղափարների լուրջ տարբերութիւն: Անկասկած ցանկալի է, որ այս երկրում գտնվող մի խումբ հայերը աւելի լրջօրէն վերաբերվին իրանց հասարակական պարտաւորութիւններին և իրանց ոյժերը չը վատնէին անտեղի և անձնական բնաւորութիւն ունեցող երկպառակութիւններ լրացաւ»:

Երկրագործութեան և պետական կառուածների միաստորութիւնը այս քանի օրերս ուղարկել է մի քանի մասնագէտներ հարաւային Ռուսաստան, խարկովի, խորսոնի և Ռւսանի հողագործական ուսումնարաններին կից թիւնուս տունկ եր անկեղևու, զիւղական դպրոցներին և զիւղացիներին ձրի, իսկ հողատէրերին, որոնք կը ցանկանան թիւի այգիներ գցելու, է փան գնեցում տունկեր բաժանելու համար: Նոյնպիսի տունկեր մը տագորութիւն կայ գցելու և հարաւային նահանգների բոլոր անտառապետութիւններին մէջ:

«Հայրենիք» լրագրում կարդում ենք. «Կալկաթայի հայ գաղթականութիւնը նկատելով Պարսկաստանի և Հնդկաստանի թեմական առաջնորդ խաչայի եպիսկոպոսի մատուցած եկեղեցական ծառայութիւնները, խնդրազիր տուեր են նորին սրբազնութիւնը արքեպիսկոպոսութեան բարձրացնելու համար»:

Կէրօսիսագործարանատէրերի սինդիկատին վերաբերեալ հարըզ դեռ ևս վճարված չէ կարելի համարել: Թէն գործարանատէրերը համաձայնութիւն են կայացրել իրաքահաշիւր Ֆիրմայի արտասահմանեան արտահանութեան մէջ ունենալիք բաժնի մասին և մինչև անգամ փոքր Ֆիրմաներին ևս մի փոքր մաս են հանել, բայց նրանք հանդիպել են մի արգելքի, որին յաղթել դժուար է: Ի նկատի ունենալով, որ մեր կերօսիսային վաճառանոցը առանձին պայմաններին մէջ է գրված սինդիկատի գոյութեան ժամանակ, հնչտութեամբ կարող է պատահել, որ նոր ձեռնարկութիւններ երևան վի: Եւ առան սինդիկատը, ինչպէս հաղորդում է «Ից. ԵՖԱ.» լրագրը, զիմէ է կառավարութեան, միջնորդելով որ Էկոզմակի» Ֆիրմաների կողմից արտահանված արտագործութիւնները ենթարկվեն մաքսի պողին 60 կոպէկ:

Ներքին գործերի մինիստրի զեկուցման համաձայն, Թագաւոր-կայսրի Բարձրագոյն հաճու-

թեամբ, մայիսի 5-ից ամբողջ կայսրութեան մէջ ընդգրկուած է ժողովարարութիւն Յունաստանում տեղի ունեցած երկրաշարժից վնասվածների օգտին: Նուիրատուներից Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Խոսիֆօյեան առաջինը նուիրել է 1000 ռուբլի այդ նպատակի համար: Մինչև այժմ ժողովարարութեամբ մոտ օրերս հեռագրով փոխադրված է Յունաստան, Նորին Մեծութեան Թագուհի Օլգա Կոնստանտինովնայի անունով:

Թիֆլիսի յայտնի դրամատէր Յովհաննէս Չիթախով ոչինչ կտակ չէ թողել և իր կողմից ոչ մի կօպէկ չէ կտակել որ և է բարեգործական նպատակով: Հանդուցեալի ժառանգները կամենալով այդ պակասը լրացնել, հօր մահից յետոյ բարեգործական նպատակով արել են հետեւեալ նուիրատուութիւնները. 1) Երկրորդ գիմնադրայում հանդուցեալի անունով մի սոխլեյնդիտ պահելու համար՝ 1,250 ռ. 2) Ներսիսեան դպրոցին՝ 1,000 ռ. 3) Յօգուտ սովեակների՝ 1,000 ռ. 4) Գայանեան դպրոցին՝ 500 ռ. 5) Հաւաքարի Մարիամեան դպրոցին՝ 500 ռ. 6) Կանանց Բարեգործական ընկերութեան՝ 500 ռ. 7) Քահանաների ապահովութեան դրամարկին՝ 300 ռ. 8) Հաւաքարի ձրի ճաշարանին՝ 200 ռ., 9) Կոյրերի խընամող հողաբարձութեան 200 ռ., 10) Մինամի-Ղարովի դպրոցին՝ 300 ռ.: Հանդուցեալի թաղումը տեղի ունեցաւ յունիսի 5-ին, ներկայութեամբ մեծ բազմութեան: Յուղարկաւորութեան մասնակցում էին և Թիֆլիսի համալսարանը իրանց զբոյններով:

Թիֆլիսի պոլիցիան սկսել է ընդել քաղաքի հին և խարխուղ տները: Պէտք է կազմվի այն տները ցուցալը, որոնք արդէն շատ խարխուղ են, իսկ այն տները, որտեղ բնակվելը արդէն վտանգաւոր է, պէտք է դատարկվեն տնկէցնելից:

Յունիսի 5-ին, կիրակի օր, քաղաքային կրէ-դիտային ընկերութեան ընդհանուր ժողովում, ձայների առաւելութեամբ, ընկերութեան կառավարիչ ընտրվեց Անտօն Կորգանով: Քուէարկվում էին երկու հոգի՝ Ա. Կորգանով և Խ. Վերմիլե: Առաջինը ընտրվեց երկու ձայնի առաւելութեամբ:

Ասիական Թիւրքիայի Սիվասի վիլայէտում մայիսի 13-ից մինչև 15-ը խօսերայից հիւանդացի են 30, մեռել են 25 հոգի:—Իսկէլիում, մայիսի 13-ից մինչև 16-ը խօսերայից հիւանդացի են 28, մեռել են 24 հոգի:

ԹէլԱՒԻՑ մեզ գրում են. «Մայիսի 28-ին այստեղի գինեկաւանների համաբար մատուղ ունէր, որին ներկայ էր և Թէլայի հայոց հոգեւորականութիւնը: Հաշի ժամանակ Արէլ քահ. Սուրբաբանց բարձր ձայնով կարգաց, վրաց լեզուով թարգմանած կաթողիկոսական կոնդակը սովեակների մասին, որից յետոյ ազուու կերպով նկարագրեց գաղթականների և սովեակների հայրենիքի վիճակը: Տպաւորութիւնը մեծ էր: Այնուհետև ինքը քահանան անձամբ սկսեց հանդանակութիւն անել, որից յոյացաւ 80 ռ.: Այդ միջոցին, որքան ցաւով, այնքան էլ մի ծիծաղելի դէպք պատահեց.—հայ քահանաներ, փոխանակ ընկերակցին օգնելու՝ թողցին ճաշը և հետացան, երեի գործին վնասելու նպատակով»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինիստրական փոփոխութիւնները այնպէս շուտ շուտ են կատարվում Եւրօպայի սահմանադրական պետութիւններում, որ համարեա թէ կողոպտում են իրանց նշանակութիւնը և մարդ շատ առանց նստիրտ կերպով կարգում է լրագրողներ, թէ այս ինչ երկրում այս ինչ մինիստրութիւնը փոխվեց, նրան փոխարինեց այն ինչ մինիստրութիւնը, հաւատացած լինելով, որ այդ նոր մինիստրութիւնն էլ մի կամ մի քանի ամիսից յետոյ տեղի կը տայ մի ուրիշ, նոր մինիստրութեան և այլն: Օրինակ, նորերս Ֆրանսիայում Կաղիմիր-Պէրէի մինիստրութիւնն ընկաւ և նոր մինիստրութիւն կազմակերպվեց, Գիւպիլի նախագահութեամբ: Այդ նոր մինիստրութեանը մեծ համակրութեամբ վե-

րաբերվեցին թէ հասարակութիւնը և թէ մամուլը: Ամեն բանից պարզ երևում է, որ ոյժը և մեծամասնութիւնն առաջին պէս չափաւոր հանրապետական կուսակցութեան կողմն են:

Իտալական պատգամաւորների ժողովում մինիստրական անկման պատճառ դարձաւ Ֆինանսական միջոցների ընտրութիւնը: Ֆինանսների մինիստր Սոնինօի ծրարից կէտ առ կէտ խիստ ընտրութեան էր ենթարկվում: Մինիստր-նախագահ Կրիսպի առաջարկեց մի փոքր յետաձգել Ֆինանսական միջոցների ընտրութիւնը և դրադիւղ ուրիշ հարցերով: Պատգամաւորներից մի քանիսը խօսեցին այդ յետաձգման դէմ: Մեծ յուզմունքից յետոյ, պատգամաւորների ժողովը ձայների մեծամասնութեամբ ընդունեց Կրիսպիի առաջարկութիւնը՝ վիճարանութիւնները յետաձգելու մասին: Այնուամենայնիւ, բոլորովին անպատկառ կերպով մինիստրութիւնը հրաժարական տուեց, որովհետև Ֆինանսական միջոցների ընտրութեան յետաձգման համար տուած 11 ձայների մեծամասնութիւնը շատ թոյլ պաշտպանութիւն էր մինիստրութեան համար: Կրիսպի կամաւորապէս հրաժարական տուեց, և շատ հաւանական է, որ թագաւորը նոր մինիստրութեան կազմակերպութիւնը կը յանձնի կրկին Կրիսպիին:

Ունգարական մինիստր-նախագահ Վեկերլեյ նոյնպէս հրաժարական տուեց: Քաղաքական ամուսնութեան վերաբերեալ նախագիծը մազնատների ժողովում չընդունվելուց յետոյ, Վեկերլեյ մի շաբաթվայ ընթացքում երկու անգամ Վեկեան գնաց կայսրի մօտ և համոզում էր նրան նոր ժառանգական մազնատների նշանակել, որպէս զի մեծամասնութիւն կառավարի վիճելի քաղաքացիական ամուսնութեան նախագիծը ընդունել տարու համար: Սակայն Վեկերլեյի չափովեց իրազեկել ազատամիտների ջերմ ցանկացած ընթացքը: Մինիստրութեան այդ ճգնաժամը հետևանք է ազատամիտ կառավարութեան և Ունգարիայի բոլոր դաւանութիւնների հոգեւորականութեան մէջ վաղուց շարունակվող կռիւի:

Կիւն-Գեղերվարի, որին յանձնվեց նոր մինիստրութեան կազմակերպութիւնը, սկզբունքով հետևող է Վեկերլեյի եկեղեցական քաղաքականութեանը, բայց դիտարարութիւն ջանք անպապաղ հետեւել նրան: Սակայն Վեկերլեյի դրամամբ, բոլոր ազատամիտները հրաժարվեցին մինիստրական պաշտօնից, դրանով կամենալով ստիպել Գեղերվարիին՝ հրաժարվել նոր մինիստրութեան կազմակերպութիւնից: Գործերի այդպիսի դրութեան ժամանակ, շատ հաւանական է, որ պարզամետը կարճակալի և նոր ընտրութիւններ կը նշանակվեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Պատգամաւոր Կոլոեանի նորերս «Secolo» լրագրում շատ յուզիչ տեղեկութիւններ հաղորդեց գործերի դրութեան մասին Սիբիլիայում: Այնտեղից նրա ստացած տեղեկութիւնների համեմատ, ջառատուն հազար բանօրներ ծծմալային հանքերում նստած են առանց հացի և սպառնում են կրակ տալ ցորենին, պատճառարանելով իրանց դիտարարութիւնը նրանով, որ եթէ իրանք դատապարտված են սովամահ լինելուն, թող ուրիշներն էլ իրանց վիճակից լինեն: Առաջակութիւնը կղզու վրա այնպիսի չափեր է առել, որ հողատէրերը բարձի թողի են անում իրանց դաշտերը:

«Բէյտէրի» գործակալութեանը Սիբիայից հեռագրում են, որ հողային անկարգութիւնները Կրիսպի կղզու վրա շարունակվում են: Չը նայելով նահանգապետի արգելքին, ժողովներ են կազմվում՝ հողային հարկի դէմ բողոքելու նպատակով:

Եղուխաներին Գերմանիա վերադարձնելու հարցը, որը ինչպէս յայտնի է, ընդունվեց դաշնակցական խորհրդի կողմից, մինչև այժմս դեռ հերթական հարցերի ցուցակում չէ ընկել գերմանական ըէյլստագուստ: Կրիսպայանական լրագրողները հաղորդում են, որ դաշնակցական խորհուրդը վճռեց յետաձգել եղուխաներին վերադարձնելու հարցը ընտրութեան անորոշ ժամանակով: Այդ հանդամանքը բացատրվում է նրանով, որ կառարութիւնը սուղուց համոզված է, որ ըէյլստագուը կը մերժի եղուխաներին վերադարձնելու հարցը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱԶԱՆ. 3 յունիսի: Կազանեան անձուխ վառօղ պատրաստող գործատան մէջ եղած պայթիւնից սպանկեցին 7 բանօրներ:

ԲԱՌՈՒՄ. 3 յունիսի: Բէլգիական ընկերութեան կէրօսին գործատանը ամբողջապէս այրվեց իր ցիտերաններով:

ՍՈՑԻԱԼ. 3 յունիսի: Կառավարութիւնը նշանակեց երեք հոգուց բաղկացած մի յանձնաժողով՝ այսօրեղի մուսուլմանները ժամանակաւորապէս կառավարելու համար. հրամայված է քննութիւն կատարել քաղաքային վարչութեան գործողութիւնները մասին:

ՏԱՆՃԷՐ. 3 յունիսի: Արտաքին գործերի մինիստրը հաղորդեց զի պոլսեաններին, որ Արզու-Ազիզը սուլթան կը հրատարակի: Այսօր նրա եղբայրը, Մահմէդը բողոքեց և քննարկեց Սուլթանի ժողովուրդ: Մի քանի օրէնքները համաձայնութիւն կայացրին ձեռք ձեռքի տուած գործել Մարտիկոսով և սպասուած են, որ անցքերը աւելի մեծ ծաւալ ստանան Մարտիկոսով: Ըստ հաստատուած է, որ Երզրայի միջամտութիւնը կը պահանջվի:

ՀՈՒՍԻ. 3 յունիսի: Կրօնի առեց, որ ցանկալով համաձայնութիւն կայացնել, մինիստրութիւնը վճռեց հրատարակել 23 միլիոն գումարի մի քանի նոր նախագծված հարկերէն, որոնց կառավարութիւնը մտադիր է փոխարինել ինստիտուցիան և ոգելից խմիչքներին վերաբերեալ օրէնքի թէփօրմով: Պատգամաւորները ժողովը համարեա միաձայն ընդունեց կառավարութեան առաջարկութիւնը:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. 3 յունիսի: Կորեյում ապստամբութիւնը ճնշված է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 4 յունիսի: Երէկ, 3 ժամին կէսօրից յետոյ, Թագաժառանգ Յիսարովիչ Պետեր-հովից ճանապարհ ընկաւ դէպի Մոսկովա «Полтораки Эвельд» նաւով. նոյն տեղը ճանապարհ ընկաւ և Նոյա կայսերական Մեծութիւնները խոստովանաւոր Եանիշիլ:

ՍՈՑԻԱԼ. 4 յունիսի: Նոր կառավարութիւնը սպասեց 60 անձանց, որոնց թուում մի կնոյ: Նախկին կառավարութեան ժամանակ այդ անձինքը բանտարկված էին վարչական ձեռք: Ներսին է չնորված նոյնպէս 15 հրատարակիչներին և պատասխանատու խմբագիրներին, որոնք դատաւարարված էին մամուլին վերաբերեալ յանցանքներ համար:

ԼՕՆՊՈՆ. 4 յունիսի: Թագաժառանգ Յիսարովիչը, այսօր զայտուց յետոյ, կարճ ժամանակ կանցկացնի Ռէյսի պրիսոնի և նրա կնոջ մօտ, որից յետոյ կուղարկուի Վարսօն, Թէմպայ վրա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 5 յունիսի: Երէկ, Ֆինանսների մինիստրի նախագահութեամբ, խորհրդակցութիւններ սկսվեցին՝ արտասահման արտահանվող հացի համար եղած արքիֆները պակասեցնելու մասին: Խորհրդակցութեանը մասնակցում են կառավարչական հիմնարկութիւնները, երկրագործական արհիւարերութեան և քաղաքային մասնագործները 50-ից աւելի ներկայացուցիչներ:

ՀՈՒՍԻ. 5 յունիսի: Երէկ այն կառքի վրա, որի մէջ գտնվում էր Կրիստի, մէկ անպատ երիտասարդ ատրճանակ արձակեց. Կրիստի անվնաս մնաց. յանցաւորը բռնված է. յայտնվեց որ Լէզա անունով անարիտա է նա, Բոմանից: Պատգամաւորների ժողովը և հասարակութիւնը Չերմ ցոյցեր արին Կրիստիին: Թագաւորը և թագաժառանգն այնպէսին մինիստրին և չնորձարեցին նրան վայնայից ազատելու համար: Բոլոր քաղաքները, առանց բացառութեան, դատաւարարում են այդ յանցաւոր փորձը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 3-ին

Table with market data for St. Petersburg, including prices for various goods like flour, oil, and sugar.

Table with market data for flour and other goods, including prices per sack.

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՍՏԱՆԵԱՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻՍԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերէն:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

- List of medical cases and treatments, including names of patients and their conditions.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

- List of medical cases and treatments from Yerevan, including patient names and symptoms.

Խնդրում է հայ հեղինակներին, թարգմանիչներին և առհասարակ ցանկացողներին, որ բարեհաճեն իրանց հեղինակութիւնները, թարգմանութիւնները և ուրիշները ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ Հիւանդանոցի վերատեսուչ թշկապետ ՆԱԼԱՍԱՐԳԵԱՆԻ:

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ

Յանկացողները պէտք է ուղարկեն այս հասցեով. M-r N. Karapetian, 439, P. O. Rox. WORCESTER, MASS, E. U. d'AMERIQUE. 2-10

ԱՐԱՍՏՈՒՄԱՆՈՒՄ

ՐԷՍՕՐԱՆ "ԿԱԻԿԱՉ"

Կահաւորած սենեակներ: Եւրոպական և ասիական խոհանոց: Ստանում է կովկասեան լրագիրներ: Սենեակները յարմարեցրած թէ անհատներին և թէ զերդաստանով ընկալութեան: Ղեկըրը ամենաշաքիւտը: Ամբարանոց Ղատարակներ, № 14: (№ 60) 3-4

ԼՈՒՍԱՆԿԱՐ ԲՈՒԾՈՎԻ ՄՕՏ

Վաճառվում են ԳԻՐԳՈՐ ԱՐՄՐՈՒՆՈՒՆ լուսանկար պատկերները.

- List of items for sale, including photographs and other goods.

ԱՐԻՍՏՈՒՄԱՆՈՒՄ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ

ԲԱՌԱՐԱՆ

Ա. Հատորի գինն է 3 ր.
Բ. Հատորինը 4 ր.
Վաճառվում է Խիզիկի զրավաձառանցումը, Գօլովինսկի պրօպիէտ:
Գրավաճառներին 10% զիջում: (№ 58) 4-10

Large advertisement for 'ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ' (Arithmetic Courses) with detailed text about the course and contact information.

Advertisement for 'Վարստանի և Իմերէթի վիճակային կոնսիտորիայի' (Vartan and Imereh Consistorial) with details about services.

Large advertisement for 'ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ „ՐՕՍՄԻԱ“' (Apollon Insurance Company) with details about insurance services.

Advertisement for 'Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ' (St. Petersburg Bourse) with details about market activities.

Advertisement for 'ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ' (Risoun-Anon) with details about the company and its services.